Այդ տեսակ զինուած խմբի ներկայութիւնը պէտք է ենթադրել միմիայն նրանով, որ իւրաքանչիւր առևանդումն անշուշտ հանդիպելու էր ընդհարման և ընդդիմադրութեան։ Ահա այդ ընդհարումն և ընդդիմադրութիւնն այսօր շատ տեղերում սիմբոլական ձևերով շարունակում է տեղի ունենալ, յիշեցնելով նախկին արիւնալի կռիւները։

Եթէ հարսը օտար գիւղացի է, սորա համագիւղացիքը փակում են պարանով ճանապարհը փեսայի գիւղից եկած հարանքաւորների արշաւախմբի առաջ և մէկը իրենցից առաջ գալով, հրաւիրում է նորեկներին ըմբշակռուի։ Այստեղ փեսայի ազգականներն ստիպուած են փող նուիրել հարսի համագիւղացի կորիճներին, որպէսզի սորա վերցնեն պարանը և ճանապարհ տան նորեկ փեսայի խմբին [1])։ Արդ աւելորդ չի լինիլ առաջ բերել յայտնի ճանապարհորդ պ. Քաջբերունու մի նկարագիրը՝ հարս բերող կորիճների այդ տեսակ արշաւախմբի մասին։ «Կալերի մօտ, մեր ճանապարհի վրայ սպասում էր մեզ առոյգ երիտասարդների մի խումբ. նրանցից մինը, չուխան հանած, թևերը վեր քաշած, գլուխը բաց, երեսը վառ, աչքերը փայլուն, այնպիսի մի դիրք էր բռնել, որ կարծես առիւծի նման պէտք է յարձակուի իւր որսի վրայ։ Նրա ընկերները առանձին խնամքով նրան բռնած, ծանրաքայլ կերպով յառաջ էին մղում։ Տо, լա, ձիս բռնէք, ձիս բռնէք, մէ՛ ըշկացէք դար մէջքը քանի տեղից կըկոռեմ—ասաց և ձիուց վայր նետուեց մեր խմբից մի առոյգ, ուժեղ երիտասարդ։ Փոքր էր մնացել, որ երկու ախոյեանները միմեանց կըպչէին, բայց մեր խումբը բռնեց մեր երիտասարդին և ասա հանելով խուրջինից եփած միս, գաթայ, հաց, գինի, յանձնեցին Խաչիկու (գիւղի անունն է) խմբին։ Այս սովորութիւնը լինում է այն ժամանակ, երբ մի գիւղից գնում են միւս գիւղը հարս բերելու։ Նորահարսի գիւղի ազատները դուրս գալով հարանքաւորների առաջ, կըպահանջեն

[1]) Свадебные обычаи ахалцихск. армянъ—„Этнографическое Обозрѣніе„ 1889 г. №1.

Հայ մատենագրության թուանշային գրադարան